ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2019թ. հունվարի 17-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի VII դասարանի ծնողական ժողովը:
Ժողովին ներկա էին ծնողների մեծ մասը:
Ժողովը վարում էր դասղեկ Արուսյակ Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.Կիսամյակային ամփոփիչ գնահատականների ամփոփում:

2.Դասարանի աշակերտների զբաղվածությունը դպրոցից դուրս:

3.Ընթացիկ հարցեր:

1.ԼՍԵՑԻՆ.Կիսամյակային ամփոփիչ գնահատականների ամփոփման հարցը:

Դասղեկ Ար.Դավթյանը նշեց, որ աշակերտները առաջադիմության հարցում թերացել են: Նախորդ տարվա 3 գերազանցիկների փոխարեն այս տարի գերազանցիկներ չկան:

Դասղեկը ներկայացրեց նաև անցած ծնողական ժողովներից հետո աշակերտների ուսման առաջադիմության, հաճախումների 5 ամիսների պատկերը:

2.Լսեցին. - «Դասարանի աշակերտների զբաղվածությունը դպրոցից դուրս» հարցը:

Ելույթ ունեցան դասղեկը և ծնողական խորհրդի նախագահը: Երկուսն էլ հավաստեցին ,որ սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում մեծ է ծնողների դերը երեխայի ուսման մեջ աջակցելու և դպրոցից դուրս նրա՝ օրվա մնացած ժամերի զբաղվածությունը կազմակերպելու հարցում, որովհետև նրանց ամենօրյա անմիջական հսկողությունից և ծնողական պարտքի զգացումից է կախված աշակերտի ուսման նկատմամբ պատասխանատվությունը, օրվա ռեժիմի ճիշտ կարգավորելը: Պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխայի դաստիարակության ,նրա՝ օրվա ընթացքում կատարած բոլոր գործողությունների համար: Այս տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքում ավելի շատ հայրերը պետք է հետաքրքրվեն ու զբաղվեն:

Բացի դասապատրաստումից պետք է հետևել, որ երեխան կատարի լրացուցիչ հանձնարարություններ, զբաղվի հանրօգուտ աշխատանքով, գիրք կարդա և ժամանակ գտնի օգնելու ծնողին տնային գործերում:

Դասղեկը հորդորեց ծնողներին ճիշտ կազմակերպել երեխաների և՝ ազատ ժամանակի տնօրինումը, և՝ դասապատրաստման գործը. չէ՞որ այդ ամբողջ ժամանակահատվածում նրանք գտնվում են ծնողների կողքին և նրանց հսկողության տակ:

Կարևոր է նաև երեխաների հաճախակի այցելությունը մշակութային օջախներ՝ կրթական մակարդակը հարստացնելու և նոր մարդ ձևավորելու ընթացքը ճիշտ հիմքերի վրա դնելու համար:

3.Լսեցին ընթացիկ հարցեր:

Ելույթ ունեցավ դասղեկ Ար.Դավթյանը՝ նշելով, որ առաջադիմությունը բարձրացնելու նպատակով շատ կարևոր է լուծել կարգապահական խնդիրները:Նա լսեց նաև ծնողների կարծիքները և առաջարկությունները:

Որոշեցին .

ա)Հետևողական աշխատանքի միջոցով բարձրացնել առաջադիմությունը:

բ)Ուժեղացնել դասղեկի և ծնողների միասնական հսկողությունը երեխաների դասերից դուրս զբաղվածության և դասապատրաստվելու հարցում:

Ժողովի նախագահ՝ ----------/Աստղիկ Հարությունյան/

Քարտուղար՝ ----------/Լուսինե Աբելյան/